ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 960-Ա/2 **29.07. 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՀՄ. 647 - Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» հմ. 647-Ա/Ք հրամանի՝

1) հավելված 1-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (բակալավր ու անընդհատ և ինտեգրացված) մասնագիտությունների կրթական ծրագրերի» ցանկում՝

ա. «055 Ֆիզիկական գիտություններ» բաժնի «055101.00.6 Ֆիզիկա» մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել նոր՝ «055101.04.6 Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն» և «055101.05.6 Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա» թվերով և բառերով.

բ. «103 Անվտանգության ծառայություններ» բաժնի «103101.00.6 Ստորաբաժանումների կառավարում» մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել նոր՝ «103101.06.6 Սահմանապահ զորքերի ստորաբաժանումների կառավարում» թվերով և բառերով:

2) Հավելված 2-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոս) մասնագիտությունների կրթական ծրագրերի» ցանկում՝

ա. «055 Ֆիզիկական գիտություններ» բաժնի «055101.00.7 Ֆիզիկա» մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել նոր՝ «051101.15.7 Բարձր էներգիաների տեսական ֆիզիկա» թվերով և բառերով.

բ. «091 Առողջապահություն» բաժնի «091801.00.7 Հանրային առողջություն և առողջապահություն» մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել նոր՝ «091801.05.7 Թվային առողջապահություն» թվերով և բառերով.

գ. «101 Անհատական ծառայություններ» բաժնի «101501.00.7-Զբոսաշրջություն» մասնագիտության 3-րդ սյունակը լրացնել նոր՝ «101501.06.7- Սպորտային տուրիզմ» թվերով և բառերով.

Նախարար Արայիկ Հարությունյան

X